



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Ի Բ. ՅԱՐԻ 1912

Տարեկան 15 ֆր. ոսկի — 6 ռբ.:
 Վեցամսեայ՝ 8 ֆր. ոսկի — 3 ռբ.:
 Մեկ թիւ կ'արժէ 1-50 ֆր. — 70 կ.:

ԹԻԻ 1, ՅՈՒՆՈՒԱՐ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Չ Ո Ր Մ Ն Ա Ր Ի Ի Ր Ա Մ Ե Ա Կ Ը

1512—1912



զգային ընդհանուր տոնախմբութեան հաղուադէպ տարեշրջան մը
 բացաւ 1912 թուականը. մտքի լուսաւորութեան եւ քաղա-
 քակրթութեան հայ հողի վրայ պատուաստման՝ հայ տպագրու-
 թեան արուեստին չորեքդարեան յորելնին տարեշրջանն է այն,
 որուն շուրջ պէտք են խտանալ ոչ միայն գրականութեան
 անդուլ մշակները, այլ նաեւ անոնք, որոնք ո եւ է կերպով
 մասնակից եղած են վայելելու գրական գործիչներու հասուցած
 կենսական ամենագրի պտուղները:

1512ին մտաւորական լուսաւորութեան կենդրոնավայր Վենետիկ քաղաքին մէջ
 ուսկիւրայ անձնաւորութիւն մը կը յղանայ գուտներեզեան տիեզերահռչակ գիւտին
 տալ նաեւ յատուկ հայ գոյն մը՝ ձուլելով առաջին անգամ հայերէն տառեր: Հայ
 Գուտներեզին անուան ի պատիւ կանգնուած Յիշատակարանին տակ հայ մատենագրու-
 թիւնը գորշմէլ միայն կրցած է դժբախտաբար՝ Deo incognito. Տպագրութեան ան-
 գրանիկ ծնունդին՝ ծանօթ 42 տողեան լատին Ս. Գրքի, նման հսկայ աշխատութեան
 մը գործածուելու բախտը չեն ունենար ի հարկէ այս առաջին հայ տառերը. նման
 գործք մը կարելի չէ յուսալ նորածին հայատիպ տպարանէ մը, ըստ որում ժամանակին
 հայ մտաւոր կեանքը նման ձեռնարկի համար զուրկ է բացարձակօրէն նպաստաւոր պայ-

մաններէ. « Հայոց երկիրը անցնելով շարք մը սեւ դարերու մէջէն, այնչափ նիհարացած, ուժասպառ դարձած էր, որ կարող չէր այլ եւս նիւթ մատակարարել մտաւոր կեանքին. միտքը չի կրնար դործել տեղ մը, ուր կը գործէ սուրբ եւ այնպիսի ժամանակակից երբ ամբողջ ժողովրդեան «լինել թէ չլինել»-ը կախուած է այդ սրբի քանակէն մէկ շարժումէն. այսպիսի պայմաններու տակ ահա կամայ տկամայ կը ստիպուինք զայս մը գոհանալ «Պարզատամար»ներու, «Պատարագատեար»ներու, «Աղթարք»ներու նման մասնուի անարժէք արտադրութիւններով. այսու հանդերձ առաջին քայլն առնուած է, որուն ընդ հուպ պիտի յաջորդեն տպագրութեան աւելի փայլուն արտադրութիւններ՝ Ոսկանեան Աստուածաշունչ, Առաքել Դարբիճեցի, Մովսէս Խորենացոյ Աշխարհագրութիւնը. . . ընդ հուպ կղզիացած հայ մատենագրութիւնն ալ համաշխարհական մատենագրութեան հետ պիտի համաձուլուի անքակ. ոչ թէ շատերուն աշխատասիրութիւնները միոյն միայն մատչելի պիտի ըլլան, այլ մանաւանդ թէ միոյն խօսքը միլիոնաւորներուն միաժամանակ պիտի ծանօթանայ եւ հետեւաբար մարդկութեան ընդհանուր զարգացման իւրովսանն պիտի նպաստէ նաեւ հայ տպագրութիւնը ծանօթացրնելով գլխաւորաբար օտար ազգութիւններու հայ անհատական մատենագրարաններու մէջ վայրավատին ցրուած ու մոռցուած այլազգ անմատչելի թանկագին էջերը պատմութեան եւ մատենագրութեան. ընդ հուպ ծնունդ պիտի առնու հայ լրագրութիւնը՝ հայ ժողովրդեան վարուցն ու բարուց, յառաջադիմութեան ու յետադիմութեան միակ թարգմանը, որուն տուած իրապէս անկեղծ ու անաչառ ուղղութիւնը միայն պիտի ներմուծէ քաղաքակրթութեան բարձրագոյն հոսանքը հայ երկրի մէջ:

Զլափազանցեմք սակայն. որչափ ալ կը պարծինք թէ ունինք գրականութիւն, լրագրութիւն եւ մատենագրարաններ, այսու հանդերձ չորհարիւր տարիներ շարունակ գործող մամուլը աւելին պէտք էր տալ. աւելի բեղուն, աւելի բազմապիսի եւ գլխաւորաբար հատորաւոր հայ մտքի ծնունդ հսկայ գործքեր պէտք էին զարգարել մեր ազգային մատենագրարանները, մինչդեռ մեծաւ մասամբ թարգմանածոյ կամ անպէտք բրուշուրներ կը կազմեն այսօրուան հայ համեստ գրագրարանները. անձանձիր ոյժեր չեն պակսիր, կը կարծենք, գրական դերբուկ շաւիղն ընթանալու, թերեւս Մեկենասներն են որ կը պակսին, Ղարամբաններու, Տիւղեաններու, Էմիններու. . . յաջորդները: Կը ցանկանք որ տոհմային յորեկնիս անմոռանալի արգիւնքն ըլլայ գոնէ՛ կարող Մեկենասները մերձեցնել կարօտ հեղինակներու, այսու ուղղելով անցած թերութիւնները՝ նոր ոյժով, նոր եռանդեամբ կը զարգանանք յառաջագէ՛մ գրականութեան մէջ, կ'ունենանք մամուլ մը բեղուն, բազմանկիւթ. կը կենդանացրնենք վերստին Միսիթարայ, Չամեաններու, Աւգերեաններու, Դաթիւճեաններու. . . գործօն ոսկի դարերը, որոնց մասնաւորաբար կը պարտինք ինքնաշխատութեամբ յօրինուած հատորաւոր անմահ գործքերը. այս կերպով միայն կրնանք արժանապէս յարգել տպագրութեան գիւտը՝ Մարդկային մտքի զօրութեան հզօր գործիքը, ուժի մեծ հաւասարակաշիւղ, ու բարոյական աշխարհի Ստեղծիչը. the mightiest engine of human intellect, — the great leveller of power, — the Demiurgus of the moral world — The Press! (Բըլուրը):

Հ. Ա. ՉԱՐՈՒԱՆԵԱՆ



8604-56